ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ ՆՈՐ ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻՑ

Ջրաշինարարությունը տարեց-տարի մեծ չափեր է ընդունում: Նոր յուրացվող հողատարածությունները ջրալի դարձնելու համար կառուցվում են նոր ջրամբարներ: Հոկտեմբերյանի, Թալինի, մասամբ էլ Անիի ոռոգման սիստեմները ջրով ապահովելու համար ՍՍՀՄ և Թուրքիայի բանակցություններով որոշում է կայացվել Ախուրյանի ջրամբարի կառուցման վերաբերյալ:

Այդ ջրամբարի կառուցմամբ մոտ 54 քառակուսի կիլոմետր տարածություն մնալու է ջրի տակ, այդ թվում Ներքին և Վերին Ջրափի, Երազգավորս, Շիրակավան, Իսահակյան, Նորաբեր գյուղերը և Անի երկաթուղային կայարանը:

Ախուրյան գետի այս հատվածում, նրա աջ ու ձախ ափերին զգալի քանակությամբ ճարտարապետական արժեքավոր հուշարձաններ կան, որոնք նույնպես կմնան ջրի տակ, եթե միջոցներ չձեռնարկվեն նրանց փրկելու համար:

Որոտանի հիդրոէլեկտրակայանների կասկադի կառուցման կապակցությամբ ստեղծվում են երեք ջրամբարներ, որոնց տակ են մնում հնագիտական նշանակություն ունեցող վայրեր:

Նախիջևանի ԱՍՍՀ-ում կառուցվող ջրամբարի տակ է մնում Արաքսի ձախափնյա Թազագյուղի զգալի հնության վանքը և այլ հնավայրեր:

Վերոհիշյալ հուշարձանների հետազոտման և նրանց տեղափոխման գործը պետք է սկսել անհապաղ: Ամբարտակների կառուցումն ավարտելուց հետո, այլևս ուշ կլինի որևէ միջոցի դիմելը:

Պետք է հուսալ, որ Պետշինի, Գիտությունների ակադեմիայի համապատասխան հիմնարկները, Հուշարձանների պահպանման ընկերությունն ու Ճարտարապետների միությունը գործնական քայլերի կդիմեն համաժողովրդական սեփականություն հանդիսացող արվեստի հուշարձանների դուրսբերումը կառուցվող ջրամբարներից օր առաջ իրագործելու համար:

Տ. Մարության

Ճարտարապետ, հանրապետության վաստակավոր շինարար,
Հուշարձանների պահպանության ընկերության խորհրդի
Նախագահության անդամ

31.VIII.1968

Ինչպես հայտնի է, կառավարության որոշմամբ հուշարձանների նորոգման գումարը հնգապատիկ մեծացվեց (100 հազար ռուբլի տարեկան), հայթայթվեցին այդ նպատակի համար նաև այլ գումարներ: Ի՞նչ տեղի ունեցավ դրանից հետո. այլ հուշարձաններում ուշադրություն կենտրոնացնելով, մոռացության տրվեց այնպիսի մի հուշարձան, ինչպիսին Թալինի կաթողիկեն, որի շուտափույթ նորոգման համար էր, որ խնդրվում էր միջոցների ավելացում: Այժմ ի՞նչ վիճակում է այդ համամարդկային արժեքի հուշարձանը: Արևելյան աբսիդը ներսից և դրսից լայն ճեղքված է, գմբեթակիր արևմտակողմի կամարը խախտված: Հարավային ճակատի վրա կախված պատահատվածներ կան, սովորական, ոչ մեծ ուժի երկրաշարժի հարվածներից կործանման ենթակա: Ո՞վ պատասխան կտա, եթե այդ տեղի ունենա, և ի՞նչ օգուտ, եթե որևէ մեկը որևէ պատասխան տա: Եվ ի՞նչ կմտածի Երևանի փառատոնին եկած և մեր այդ հուշարձանը տեսնող օտարերկրացին:

Այդ նույն տաճարից ոչ հեռու, Կամսարականների կառուցած փոքր եկեղեցու շուրջը վաղուց կործանված հուշարձանի քարակույտերն են, չպեղված, չուսումնասիրված, անբարեկարգ:

Մաստարայի հայտնի հուշարձանի հարավային նախամուտքը կործանվել է ու այդպես էլ մնացել անկանոն, անբարեկարգ:

Մաստարայից վերև, երբեմնի Ադիաման, այժմ Գառնահովիտ գյուղում է գտնվում Հռիփսիմեի տիպի հայտնի, շատ տեսակետներից հետաքրքիր հուշարձանը: Ինձ հայտնի չէ, թե երբվանից է այն լքվել, բայց մինչև այսօր մի բարի ձեռք նրան չի կպել. դեռ ավելին, այն վեր է ածվել պահեստի, ուր շեղջով ցորենն ու պարկերով բուրդը

հարևանություն են անում. տաճարի ներքին տարածությունը ամբարների է բաժանված բարձր պատերով: Ոչ ներս մտնել է լինում, ոչ ուսումնասիրել: Տաճարի արևելակողմից և հյուսիսից ոչխարների ցերեկային փարախն է՝ ենթակա հոտապահ գամփռերի: Հուշարձանի պատերի և կտուրի վրա կանաչել են խոտ ու թփուտներ, ինչպես դաշտում: Քանդված մուտքերի վերնամասերը կախվել են առանց հենարանների:

Կործանման նախադռանն է գտնվում Մազարջուկ (այժմ Շենիկ) գյուղի 5-րդ դարի միանավ բազիլիկ տաճարի արևմտյան պատը, որի ներքնամասը արդեն չկա: Անկանոն է պահվում նույն գյուղի մյուս՝ հնադարյան, երբեմնի խաչաձև, հետագայում ձևափոխված եկեղեցին, փոխարինված պահեստի: Նրան փակցված թիթեղը նմանվում է սպիտակ չգրված մաքուր թղթի, մինչդեռ երբեմնի գիր է ունեցել, որ «պահպանվում է հնությունների կոմիտեի կողմից»:

Սրանք Արագածի հարավ-արևմտակողմի հուշարձաններն էին, իսկ ի՞նչ վիճակում են Երևանից ոչ հեռու մյուս հուշարձանները, գուցե ներկայացնեն ուրիշները:

Շատ հնարավոր է, որ Երևանի 2750-ամյակը նշելու եկած մեր հարգարժան հյուրերը, նախօրոք ծանոթ լինելով Զվարթնոցին ու Էջմիածնին, այս անգամ ցանկանան մոտենալ Արագածի լանջերին ի տես. ի՞նչ տպավորություն կստանան, թե մենք ինչպե՞ս ենք պաշտպանում մեր շատ արժեքավոր հուշարձանները, որոնք այնքան էլ հեռու չեն մեզանից, մատչելի են բոլորի համար: Եվ արդյո՞ք մեր հուշարձանները մենք պիտի պահպանենք միայն նրա համար, որ հյուրերը լավ տպավորությամբ հեռանան:

«Հայհիդրոնախագիծ» ինստիտուտի հուշարձանների պահպանության ընկերության խմբի Արագածի 27.7.1968-ին հիշյալ հուշարձաններն այցելած մի խումբ ինժեներների հանձնարարությամբ՝ Տ. Մարության (ճարտարապետ)

28.7.1968